ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 915 625 800 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3 556 863 455 դրամ, կամ ինն ամսվա մուտքերի առաջադրանքը կատարվել է 72,4 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 803 087 700 դրամի դիմաց կատարվել է 1 222 431 155 դրամ կամ կատարվել է 67,8 %-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 296 874,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 774 865,6 հազար դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 59,7 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 50,2 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 53,8 %-ով, տեղական տուրքերը՝ 156,3 %-ով, պետական տուրքերը՝ 106,7 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 90 846,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 142 003,7 հազար դրամ: 156,3%

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 20 000,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 21 331,6 հազար դրամ: 106%

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 2 765 065,5 հազար դրամ: 75%

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 510 211,3 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 450 364,1 հազար դրամ, կամ կատարվել է 88,3 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 81,6 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 160,8 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել են 2 798,6 հազար դրամ՝ 3 998,0 հազար դրամի դիմաց :

4. **Տեղական վճարների մասով** բյուջեում նախատեսված 406 583,6 հազար դրամի դիմաց գանձումները կազմել են 259 937,0 հազար դրամ կամ կատարվել է 63,9 %, որից աղբահանության վճարների մասով 168 050,0 հազար դրամի դիմաց գանձվել է 125 841,8 հազար դրամ կամ կատարվել է 74,9 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 50,5 %-ով:

<u>Ծախսեր</u>

2024 թ. համայնքի բյուջեի վարչական մասի ինն ամսվա ծախսերը կատարվել են 52,6 %-ով՝ 4 915 625,8 հազար դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 2 585 256,5 հազար դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 54,5 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 77,2 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 68,1 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 71,8 %-ով:

ե/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 64,0 %-ով:

զ/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 60,1 %-ով:

է/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 41,3 %-ով:

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը տարվա համար նախատեսված 4 886 988,6 հազար դրամի դիմաց կատարվել է 2 133 333,0 հազար դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 850 087,616 հազար դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 597 719,1 հազար դրամ, կապիտալ պաշտոնական դրամաշնորհներ՝ 433 431,8 հազար դրամ և այլ մուտքեր՝ 252 094,5 հազար դրամ:

2024 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 1 790 490.4 հազար դրամ, որից՝

ա/ Համայնքի մի շարք բնակավայրերում ոռոգման համակարգերի հիմնանորոգման համար 207 331,9 հազար դրամ, գազաֆիկացման աշխատանքների համար՝ 203 739,4 հազար դրամ, համայնքային ճանապարհների հիմնանորոգման համար՝ 973 620,6 հազար դրամ, բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման համար՝ 96 087,5 հազար դրամ, ջրագծերի հիմնանորոգման համար՝ 11 513,2 հազար դրամ, համայնքի գրեթե բոլոր բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի կառուցման համար՝ 179 724,4 հազար դրամ, համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման, հիմնանորոգման համար՝ 25 792,1 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, մեքենաների, ջրատաքացուցիչների, արևային ֆոտովոլտային կայանների և անվտանգության ապահովման սարքերի ձեռք բերման համար ծախսերը կազմել են 66 462,7 հազար դրամ,

գ/ Համայնքում նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման և այլ ոչ նյութական արժեքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 26 218,6 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ